



Ն. ԹԱՀՄԻԳՅԱՆ

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՑԱՆ*

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Մակար Եկմալցանը ապրել է ստեղծագործական երեք շրջան։

Առաջինը ուսման տարիների շրջանն է, երբ նա տիրապետում է նաև հայկական և ապա ելքոպական երաժշտական տեսության հիմունքներին ու կոմպոզիտորական ժամանակակից տեխնիկային։ Այս շրջանը ավարտվում է 1888 թվականին, նշանավորվելով «կարդր» օպերա-կանտատայի հորինմամբ։

Եկմալցանի ստեղծագործական երկրորդ շրջանը ընդգրկում է 1888-ից 1896 թվականները։ Այս տարիներին կոմպոզիտորի ողջ գործունեությունը, երաժշտական գիտելիքների իր մեծ պաշտօրը հայկական ազգային երաժշտության զարգացման գործին ի սպաս զնելով հայրենասիրական ձգումով է ղեկարգում։ Եվ նա հասնում է պատմական հաջողությունների, 1896 թվականին հրատարակելով՝ տարիների աշխատանքի արդյունք՝ «Երգեցողութիւնք Ս. Պատարագի» մեծածավալ և արժեքավոր երկը։

Ներդաշնակության ելքոպական սկզբունքները հայկական ազգային երաժշտության առանձնահատկություններին պատշաճեցնելու Եկմալցանի ձգտումը ավելի ևս խորանում է նրա ստեղծագործական երրորդ՝ բայց դժբախտաբար կիսավարու շրջանում։ Այս շըրշանը ընդգրկում է 1896-ից 1902 թվական-

ները և ընդհատվում ճակատագրական հիվանդությամբ, կոմպոզիտորի ստեղծագործական ուժերի ծաղկման տարիներին։ Սակայն մինչ այդ ինչ արել է Եկմալցանը ժողովրդական երգերի մշակման բնագավառում՝ պատմական նշանակություն ունի հայկական ազգային երաժշտության զարգացման տեսակեսից։

Մենք սույն հոդվածով, պարբերական մամուկի սույն էջերի ընձեռած հնարավորության սահմաններում, կանգ կառնենք Պատարագի, ինչպես նաև Եկմալցանի մի շարք այնպիսի ձեռագրերի վրա, որոնք կարող են ցաղափար տալ հայկական ժողովրդական երգի մշակման բնագավառում նրա կատարած աշխատանքի մասին։

Եկմալցանի ստեղծագործական ժառանգության պատճեն է կազմում նրա «Երգեցողութիւնք Ս. Պատարագի»-ն, որի վրա աշխատել է երկար տարիներ։

Իր ընդհանուր կառուցվածքի մեջ հարազատորեն արտացոլելով հայոց պատարագի արարողության աստիճանական զարգացման ամբողջական ընթացքը, Եկմալցանի Պատարագի իրենից ներկայացնում է հետըգհետե ծավալվող, լայնացող ու խորացող հոգևոր մի դրամա, որի «գործող անձինքն»-ն են պատարագի քահանան, սարկավագի ու դպիրները, իրենց թիվ երգերով, ասերգներով, մեներգներով և խմբերգներով։ Առաջին իսկ հայացքից երևում է Եկմալցանի մշակման ու ներդաշնակության լուրաց-

* Եարումակված էջմիաժին ամսագրի 1958 թվականի Խ թ-դ-ից և Դ-ից։

տուկ աստիճանական զարգացման առկայությունը: Այդ բնորոշ գիծը սկիզբ է առնում «Խորհուրդ խորին»-ի պարզ, անպահույթ մշակումից, հասնելու համար մինչև «Քրիստոսի մէջ մեր յայտնեցաւ-ի», «Սուրբ Սուրբ»-ի և «Քրիստոս պատարագեալ»-ի վսեմ, ավարտված ներդաշնակության:

Եկմալանի Պատարագը, հոգմոր դրամավածի (տեխնիստի) բնական զարգացման ենթարկված իր ընդհանուր ձևով հանդերձ, ունի իր զուտ երաժշտական յուրահատուկ կառուցվածքը: Այն բաղկացած է երեք մասից՝ ձայնին, լադա-տոնայնական և թիմատիկ ընդհանրությամբ շաղկապված ասերգների, մեղեղիների և խմբերգների երեք մեծ խմբավորումներից, որոնցից ամեն մեկը հանդիս է դալիս իրեն հատուկ երաժշտական դերով:

Պատարագի առաջին մասը միավորում է երեք խմբերգ և մեկ մեներգ (տե՛ս էջ 1—20). Գրված է եռամասային ձևով (խմբերգ-մեներգ-խմբերգ): Ակնրախ են նույն Պատարագը՝ առաջին մասի երեք հատվածների թիմատիկ և լադա-տոնայնական մոտիվությունն ու ընդհանրությունը: Առաջին մասը մի մեծ սկիզբ կամ ամուտք է:

Երկրորդ մասը կարելի է դիմել որպես ազատ գրված մեծ մասշտաբի յուրատեսակ ոլոնդո, որը միավորում է բազմաթիվ ասերգներ, մեներգներ ու խմբերգներ (էջ 20—55): Որպես ոլոնդոյի «Ճիմնական թեմա» և ամեն մի նոր «էպիգործ»-ից հետո սիթմերկ և ինտոնացիոն տեսակետից այս կամ այն շափով փոփոխված «կրկներգ»-ներ («ռեֆլեն»-ներ) են ընկալվում մի շարք ըստ էլության տարբեր, բայց մեծ առնչություն ունեցող խմբերգներ. դրանք են՝ «Սուրբ Աստուած» (էջ 21), «Յիշեա Տէր» (էջ 22), «Կեցո Տէր» (էջ 25), «Մարմին տէրունական» (էջ 27), համար 10, 11, 12, 15 սրբասացությունների խմբերգային մասերը, որոնք հատուկ են օրվան և վերջապես՝ «Քրիստոսի մէջ մեր յայտնեցաւ»-ը (էջ 52): Վերջինս, սերա առնչության մեջ գտնվելով «Սուրբ Աստուած» երփի հետ, «Չըշանակում» է ամբողջ երկրորդ մասը և երաժշտության ծավալման ընթացքում կըրկներգների ապրած իսկական զարգացման դաշտանակետն է հանդիսանում: Դրանից հետո հնչող երաժշտությունը (էջ 54—55) մի տեսակ եղանակի հավելված է: Երկրորդ կամ միջին մասի հիմնական տոնայնությունը F մարդ հարմոնիկն է (իշեցրած 6-րդ աստիճանով): Այստեղ զորող դեր են կատարում նաև կադանսային պլակալ միանման բանաձևերը, որոնք տիրապետում են ամբողջ մասում:

Ավելի մեծ ու ավելի ազատորեն մտահղացված կառուցվածք ունի Պատարագի մեղեղիների և խմբերգների երրորդ և վերջին խմբավորումը՝ «Սուրբ Սուրբ»-ից մինչև վերջ

(էջ 56—96): Այս մասի երաժշտական հիմնական կերպարը («Սուրբ Սուրբ») մի քանի անգամ կրկնվելով (տե՛ս «Ամէն»: Հայր երկնաւոր»՝ էջ 58, «Առաջի քո, Տէր»՝ էջ 62 և այլն) ավարտվում է «Քրիստոս պատարաց»-ով: Սա նույնպես գագաթնակետային մոմենտ է, գրված փինալային հիմնական գագաթնական բանաձևերը հիմնականում միանման և մեծ մասամբ վավերական, այստեղ էլ «զորող» նշանակություն ունեն: Ծաղկապող, միահյուսող գեր են կատարում նաև մեղեղիական աշխի ընկողությամբ: Կադանսային բանաձևերը հիմնականում միանման և մեծ մասամբ վավերական, այստեղ էլ «զորող» նշանակություն ունեն: Ծաղկապող, միահյուսող գեր են կատարում նաև մեղեղիական աշխի ընկողությամբ: Այս մասի դարձավածքները: «Սուրբ Սուրբ»-ին անմիջապես հաջորդող և փաստորեն նրան կցված մեղեղիական դարձավածքը օրինակ, այլևալ փոփոխություններով և տարբերակներով (սեղմ, ընդլայնված և այլն), հանդես է գալիս Պատարագի երրորդ մասի հետեւալ տեղերում: «Սուրբ Սուրբ»-ից հետո, էջ 58, տող 1, «Ճայլ մեր»-ի սկզբում՝ էջ 74, «Քրիստոս պատարագեալ»-ի սկզբում՝ էջ 87, «Լցաք»-ի սկզբում՝ էջ 91, «Գոհանամք»-ի սկզբում՝ էջ 93 և «Ամէն»: Եղիցի անոն Տեառն օրհնեալ»-ի սկզբում՝ էջ 94. մի խոսքով, այն տեղերում, երբ պետք է զգացվել ավելի ցայտում և զգալի դարձնել երաժշտական հիմնական կերպարի հանդես գալը:

«Պատարագ»-ի երաժշտության ծավալման ընթացքում մեղեղիական փոքր դարձավածքների որպես զորողով ազդակներ հանդես գալը շատ է հիշեցնում մեծ կտավի ստեղծագործություններին հատուկ լեյտոնիվային զարգացման սկզբունքը:

Նույն այս սկզբունքով են իրար հետ շաղկավում և զորվում նաև Պատարագի առաջին և վերջին մասերը ամբողջովիամբ վերցրած: Կանդ առնենք երկու օրինակի վրա: «Փառք քեզ Տէր», «Ամէն», «Օրհնեալ» է Աստուած» և նման կարճ արտահայտությունների համար Եկմալայնը մի շարք տեղերում կիրառել է I—V—I հարմոնիկ բանաձևը, հիմնական տոնի մելոդիկ դրությամբ: Այն առաջին անգամ հանդես գալով Պատարագի երկրորդ մասի սկզբում (տե՛ս էջ 24, տող 2, հատած 1—2), անցնում է նաև երկրորդին (էջ 69, տող 3, էջ 93, տող 1, էջ 94, տող 2), որով ինտոնացիոն կամար է զցվում թ և դ մասերի միջև: Այնուհետև, Պատարագի երկրորդ մասը սկսվում է սարկավագի օրհնեալ Տէր»-ով (էջ 20). Մեղեղիական նույն դարձավածքը (միայն ձ-ով, փոխանակ des-ի) հընչում է «Թարեխօսութեալմբ»-ի վերջում (էջ 17, տող 3, հատած 4—5), այսինքն առաջին մասում, սրանով բնականորեն կապվում են Ա և Բ մասերը:

Այսպիսով, Եկմալայնի Պատարագը, հոգևոր տեխնիկ ընթացքին «հետևելով» հանդիր, դրանք երաժշտական ամբողջություն

աշքի է ընկնում իր յուրահատուկ կառուցվածքով։ Մի բան, որն ինքնը ստինքյան ենթադրում է երգերի որոշակի կապակցություն և դասակրություն։ Այս է անշուշտ նկատի ունեցել Կոմիտաս վարդապետը, երբ, խոսելով Եկմալյանի Պատարագի մասին, գրել է՝ «Դասակրությունը շատ ճիշտ և հարմար է»⁴։

Երգերի կապակցության խնդիրը ըստ էլության շոշափում է Պատարագում կիրառված մողովացիաների հարցը։ Մինչև այժմ էլ մեր շատ եկեղեցիներում Լրգեհոնը չի օգտագործվում։ Երգիչները պատարագի արարողությունը կատարում են (միաձայն թե բազմացայն) առանց գործիքային նվազակցության։ Եկմալյանը հայկական հոգեւոր երգերը ներդաշնակելիս և դասավորելիս աշխատել է հարմարիվ այդ պայմաններին։ Այնուամենայնիվ Պատարագի երաժշտության մողովացիոն շեղումներն ու անցումները բավականին հետաքրքիր մի պատկեր են ներկայացնում։

Մողովացիաներով (մանավանդ ձայնային) առանձնապես հարստա են միայնակ (սոլո) երգեցողության համար ձայնառությամբ գործված մեղեղիները։ Խոկ ներդաշնակված երգերը (առանձին վերցրած) ծավալվում են գործիավագեա իրենց հիմնական տոնայնության և լադի սահմաններում, քայլ ոչ միշտ։

Պատարագը ներդաշնակված է երեք տեսակ. եռաձայն արական խմբի համար, քառաձայն, արական խմբի համար և քառաձայն խառն խմբի համար։ Վերջին երկուսը կազմված են առաջնի ոճով, այնպես որ հիմքը եռաձայն արական խմբի համար գորվածն է։ Եկմալյանը այս կրինակի, եռակի աշխատանքը հանձն է առել պատարագի երգեցողությունը զանազան տեղերում հիշտ դարձնելու և տեղական պայմաններին հարմարեցնելու ազնիվ մտահոգությամբ։

Եկմալյանը օրինավոր զգուշություն է հանդիս թերել Պատարագը ներդաշնակելիս։ Նոս գիտակցաբար խուսափել է իր տիրապետած երաժշտական արտահայտչական բոլոր միջոցները հայ երաժշտության մեջ մեքենարար ներմուծելուց, բավականանարով նրանցով միայն, որոնց կիրառումը անխաթափ կապահանդես է արանից մասին, որ առաջնակը շատ ու շատ տեղեր կարողացել է խուսափել Խվրոպական ներաժշտությանը վերին աստիճանի հրապուրի շեղեկություններից։

Հիրավի, զարմանալի է ոչ թե ներդաշնակության պարզությունը ինքնին, այլ այն, թե ինչպես է Պատարագի հեղինակը շատ ու շատ տեղեր կարողացել է խուսափել Խվրոպական ներաժշտությանը պահպան ամենաբնորոշ կողմի պարզության մեջ։

Բաժշտության լադային-ինտոնացիոն և մետրո-ությմիկ առանձնահատկությունները, առավել վատ արտացոլող այն մեղեղիները, որոնք գեղարվեստական կերպարի հետագա խորացման ու ամբողջացման տեսակետից կարող էին բավարարվել ներդաշնակության ամենապարզ միջոցով՝ ձայնառությամբ։ Սրանց մայր եղանակը կատարում է մեներգի տեսնորը։ Ձայնառություն են պահում երկու կամ երեք ձայն, հնգյակ, կամ հնգյակ և ությակ ձայնամիջոցով։ Վերջիններիս դերն է՝ ներկան հանել և ընդգծել մայր եղանակի լադային-տոնայնական գլխավոր և օժանդակ կարևորագույն ոլորտները։ Զայնառությունը Եկմալյանը առնասարակ օգտագործում է մեծ վարպետությամբ, հաճախ դրանք ճոխացնելով՝ բացի անցիկ ձայներից, նաև մեղեղինական և կադամսային դարձվածքներով, որով ստեղծվում են բուն ներդաշնակության մոտեցող մոմենտներ։ Կոմիտաս վարդապետը խսելով Եկմալյանի Պատարագում կիրառված ձայնառության մասին, քննադատում է միայն մեկ մեղեղու՝ «Ը կոյս վիմէն»-ի (էջ 244—249) սխալ պահված sis-cis հնգյակը։ Էսկ սրա այն դիտողության մասին, թե ձայնառությամբ գրված մի շարք մեղեղիներում կան հնգյակի և ությակի զուգընթաց հաջորդություններ (տե՛ս էջ 28, 245 և այլն), պետք է ասել, որ Եկմալյանի մոտ դրանք բոլոր գեղագիրում ստացվել են երաժշտական նախորդ և հաջորդ նախադատությունների միջև։ Մի բան, որ թուլլատրվում է հարմանիայի նույնիսկ դպրոցական խնդիրներում։ Հստ էության այդ զգուշությունն է, որ Կրեան գալիս է նաև Սոռաձայն և քառաձայն գրված երգերի մեջ՝ նրանց ներդաշնակության ամենաբնորոշ կողմի պարզության մեջ։

«Մարդ միանգամայն զարմանում է, — գրում է իր հոդվածներից մեկում Ծ. Ղորդանյանը, արտահայտվելով այս մասին, — թե ինչպես հեղինակը շատ ու շատ տեղեր կարողացել է խուսափել Խվրոպական ներաժշտությանը վերին աստիճանի հրապուրի շեղեկություններից։»

Հիրավի, զարմանալի է ոչ թե ներդաշնակության պարզությունը ինքնին, այլ այն, թե ինչպես է Պատարագի հեղինակը շատ ու շատ տեղեր կարողացել է խուսափել Խվրոպական ներաժշտությանը պահպան ամենաբնորոշ կողմի պարզությունը շափին։ Ծի վերցնենք, օրինակ, «Սուլքը Սուլքա-ի առաջին նախադատությունը (էջ 56), քննելու համար, թե ինչպիսի միջոցներով է խորացված նրա լայնարձակ մայր եղանակի գեղարվեստական կերպարը, ասպա կուսնանք, որ այդ Կրինային մեղեղու տակից սողոսկով

⁴ Այս երորդ գեղեկերում մեջբերումները կատարված են Կոմիտաս վարդապետի «Երգեցողությմանը». Ս. Պատարագի քննագուտական հայանի հոդվածից (տե՛ս Կոմիտաս, «Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1947 թ., էջ 137—152, կամ «Արարատ», Եղանակը, 1898 թ., էջ 111—117)։

բասալին սպառապցոցիշ շարժումը, գրամատիզմով լի իր աջեղ հնդողությամբ ուրիշ բան չէ, եթե ոչ մեզ ծանոթ, շատ անդամներ հանդիպած և նույնիսկ կիրառած I VI II V 16 VII 116 V I բանաձեր, եթե դիմենք «Փառք քեզ Տէր»-ին (էջ 24), հասկանալու համար, թե ներդաշնակության ինչպիսի «Հնարապիտությամբ» է ձեռք բերված նրա փայլուն, շքեղ ու լիաշուն հրաշությունը, մենք կատանանք ակզրդների վերը բերվածից էլ ավելի պարզ ու հասարակ մի հաջորդականությունն Այս երկույթը դասական արվածի մեծ ու խորհրդավոր դադարնիքներից մեկն է անհասկած, որն իր բնական արտահայտությունն է գուել նաև Եկմալյանի Պատարագում:

Եկմալյանը պատարագում կիրառել է ներդաշնակության մի հիմնական սկզբունք՝ ակկորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքը, մինույն ժամանակ հատուկ ուշագրություն դարձնելով նաև առանձին ձայների (տեսնոո, բաս) մեղեդիկական ինքնուրության զարգացման վրա: Նա ստիպված է եղել հայկական եկեղեցական երգերը դիտել որպես եկորսական մարդ և ուժը ձեռքին այս կամ այն շափով՝ մոտեցող, այդ ձեռքը այս կամ այն շափով հիշեցնող, բայց ըստ ուժնային լադային ազգային կառուցածներ: Եյնպես որ այնտեղ կարելի է հանդիպել նկրդաշնակության սովորական նորմաներից շեղվող և հայկական երգերի ձայնային առանձնահատկությունների հետ կապված մի շարք բնորոշ մոմենտների: Դրանցից են VII բնական աստիճանի (ակորդի), մինոր դոմինանտայի, որպես մարդական ներդաշնակության սովորմինանտայի և ընդհակառակը՝ որպես մոլլ ներդաշնակվածներում՝ մաժոր սուրդումինանտայի օգտագործումը և այլն:

Վերջին հարցը, որին հարկ է անդրագունալ Եկմալյանի Պատարագի կապակցությամբ, մեղեդիների ընտրության և փոփոխության (ելուստական խազերի և շափերի) կարևոր խնդիրն է, որովհետև, ինչպես նշում է Կոմիտաս վարդապետը, «մեր եկեղեցական երգեցողության մեջ խիստ փոփոխման է ենթարկվել մանավանդ պատարագի արարողությունը»:

Ինչ վերաբերում է մեղեդիների ընտրության, Եկմալյանը հիմնվել է սուրբ պատարագի արարողության էջմիածնի առաջին (1874 թ.) և երկրորդ (1878 թ.) տպագրությունների վրա: Մի հանգամանք, որին իր հավանությունն է տվել նաև Կոմիտաս վարդապետը:

Իսկ երգերի փոխադրության, անհրաժեշտ բարեկիրդությունների և խմբավորման հար-

ցում Եկմալյանը նկատի է ունեցել նախ հայկական երաժշտության օրինաչափությունները, ապա և երաժշտական մի շարք բնորոշ սեղմաննուր գրինքների նեղանակները հատածների բաժանելիս նա ղեկավարվել է հայկական ժողովրդական և նկեղեցական երգերի համար գարձագերի, տարածության վրա մետրիկ տեղաշրջերով կրկնվելու յուրահատկությունից (նման երկույթի կարելի է հանդիպել Պատարագի շատ տեղերում). տես «Գովեա Երուաղեկմ», էջ 254—256): Փոխադրության ժամանակ երգերի ամանակը բարեփոխելիս, Եկմալյանը աշխատել է հարմար տեղում դրանց ոփթմբ թիշ աշխատացնել («Եռորդ խորհին», էջ 1—7), և կամ՝ կատարումը պարզեցնել, հեշտացնել («Յայս յարկ», էջ 8—14) և այլն:

Եղանակների փոխադրության հարցում Եկմալյանը թույլ է տվել նաև թերությունները, որոնցից գլխավորներն են՝ մի շարք դեպքերում հայկական երաժշտության հատուկ քառյակային սիստեմից շեղվելու ու երգերը հատածների բաժանելիս՝ հայոց լեզվի շեշտադրության և տաղաչափության հիմունքները հաշվի շառները: Կոմիտաս վարդապետը այս մասին արել է բազմաթիվ ուսանելի դիտությունները: Սակայն նման մասնակի թերությունները ոչ մի կերպ չեն կարող նսեմացնել Պատարագի՝ որպես մեծ ու ամբողջական ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքները, ինչպես նաև ազգային երաժշտության տեսակետից նրա հարպատությունը:

Եկմալյանը իր այս մեծածավալ երկով հայ իրականության մեջ հանդես եկավ որպես լայն կտավի ստեղծագործությունների ստրովուր-կոմպոզիցիոն յուրահատկություններին գիտակ, ելուստական ներդաշնակության և հատկապես հոմոֆոն բազմաժամության սկզբունքները հայ երաժշտության մեջ փայլուն կերպով կիրառելու ընդունակ, ինչպես նաև մարդկային ձայնի կատարողական հնարավորությունների և առհասարակ երգչախմբային դրության ձեփ վարպետ:

Խոսելով հայկական ժողովրդական երգերի մշակման բնագավառում Եկմալյանի կատարած աշխատանքների մասին, պետք է ասել, որ նա դեռևս Պետերբուրգի կոնսերվատորիայում սովորելու ժամանակ, մշակել ու ներդաշնակել է Ղազար քահանա Հովսեփյանի կազմած «Քնարիկ մանկական»-ը, որի մեջ տեղ էին գտել նաև հայկական ժողովրդական երգերը: «Ներդաշնակողի կողմից» գրված փոքրիկ առաջարանում կարդում ենք «Ներդությունների խնդրության մուտ մասնակիրից և արժանապատիկ հեղինակից»

թե՛ այն թերությունների համար, որոնք կարող են գտնվել մեր ներդաշնակության և երգերի ձևին մեջ, թե՛ այն փոփոխություններին համար, որ արել ենք բռն եղանակների մեջ: Այդ եղանակները մասսամբ հավաքված լինելով ժողովրդի բերանից՝ շատ անգամ զուրկ էին երաժշտության տարրական օրենքների պահանջած պայմաններից, որով է անհնար չը նոցա համար կազմել կանոնավոր ներդաշնակություններից:

Հասկուցյալ երաժշտագետ Ալ. Շահվերդյանը, «Հայ երաժշտության պատմության ակնարկներ» աշխատության մեջ, Եկմալյանի մասին խոսելիս, Վկայակոչելով երիտասարդ կոմպոզիտորի սույն տողերը, հարցնում է: «Հետազարում Եկմալյանը վերանայել է արդյոք իր այս համոզումը, ձերազատվելով նման նախապաշտումներից»:

Բայց Եկմալյանը իսկապես ոմանցել է արդյոք նախապաշտումներ ժողովրդական երգերի նկատմամբ: «Քննարիկ մանկականում պարունակված ամենաաշքի ընկնող ժողովրդական երգը՝ «Այծեմնիկ և որսկան» հանրահայտ երգն է: Վերջինիս մշակումը ցույց է տալիս, որ Եկմալյանը ոչ մի այնպիսի փոփոխություն չի կատարել, որը, ասենք, փոփոխեր եղանակի ժողովրդական բնույթը: Ընդհակարակը, երգի եղանակը, Եկմալյանի մշակմամբ, ավելի հարազատ, ավելի հայկական է, քան այն, ինչ այժմ կատարվում է: Երգի ներդաշնակությունն էլ պատշաճեցված է նրա պահանջին առանձնահատկություններին. պահպանված է եղանակի լազարյան տոնիկան, երգի սկզբում հանդիս եկող ըս-ը Եկմալյանը դիտում է որպես Շահ-ի իշեցված Եղ-դ աստիճանը. այնուհետև եղանակի հետ միասին ներդաշնակությունն էլ անցնում է ու ձայնաստիճանին և այլն:

Եկմալյանից մեզ հասած ձեռագրերը խոսում են այն մասին, որ Կոմպոզիտորը հիանալի կիրառվ հասկանում էր հայկական ժողովրդական երգերի կառուցվածքը և դրանք մշակելիս ու ներդաշնակելիս նա ելնում էր այդ երգերի բնորոշ առանձնահատկություններից: Մի վառ օրինակ է այս տեսակետից «Օրորոցային» խորագիրը կրող երգի մշակման մասգրությունը:

Հայկական ժողովրդական Ներդերի մշակման բնագավառում Եկմալյանը եթե մի կողմից շարունակում է կիրառել ակկորդների

⁵ Տե՛ս «Քննարիկ մանկական», երգեր, պարերգեր և աղօթներ փորահասակ մասումների համար. ձայնագրեց Դավար քահանա Հովսեփյան, Ս. Պետրովը, 1887 թ.:

* Զեռագիր, պատրաստվում է տպագրության

ուղղահայաց հաջորդականության սկզբունքը, ապա մյուս կողմից նա աշխատում է որոնել և գտնել ներդաշնակության այնպիսի ձևերի, որոնք մայր եղանակին ընկերակցող խմբի մյուս ձայներին համեմատարար ավելի անկաշկանդ ծավալվելու և կամ պարզապես գեղարվեստական ամբողջական կերպարի ստեղծման մեջ ինքնուրուցն դեր խաղաղուու հնարավորություն կտային: «Քեզի մեռնեմ էցմիածին» կամ «Նանու զարդեր» երգը, օրինակ, կոմպոզիտորը աշխատել է մշակել թիւ ազատ ներդաշնակության միջոցով: Այն գրված է երեք տարրերակներով, որոնցից ամենահաջողը սովորանում մենակատարի և քառաձայն խմբի համար դաշնամուրի նվագակցությամբ մշակվածն է: Գաղցկում է, որ Եկմալյանը ձգուել է համբագային յուրահատուկ փայլ տալ գեղղկական այս անպաճուցք երգին: Դաշնամուրացին կարծ ոմուտքա-ից հետո, որը կարծես ուրվագծում է երաժշտական հիմնական կերպարի գլխավոր գծերը և հաստատում տոնայնությունը, սկսում է մենակատարը. հանկերգին նրան միանում է նաև խումբը, որով ստեղծվում են «սոլուս-ի» և «տուտք-ի» գունեղ համագործյուններ: Ներդաշնակության տեսակետից վերը նշված համեմատական ազգատություն-ը կայանում է նրանում, որ այստեղ, ֆոնացիոնալ հարմոնիայի կիրառման ահմաններում, մայր եղանակին ընկերակցող ձայները ոիթմիկ զգալի ինքնուրուցյունություն ունեն: Ըստ Խրեստյանի, ակորդների ուղղահայաց հաջորդականության սկզբունքի կիրառության մայր եղանական ընկերակման մշակման սկզբունքը անդրազատվելու համար, գգուշավոր Եկմալյանը, քունկցիոնալ հարմոնիայի սահմանեներում խմբի առանձին ձայներին ոիթմիկ որոշ ինքնուրույնություն տալու նանապատճեների եր որոնում: Այս տեսանկյունից որոշակի արժեք են ստանում նաև «Բոյըդ բարձր» և «Անձրևն եկավ շաղաւեն» երգերի մշակման սկզբունքը Երկուսն էլ ներդաշնակված նեն նուաճայն: Երկուսի մեջ էլ բասը, մնալով տեղում՝ ձայնառություն է պահում: Խսկ միջին ձայների ոիթմիկ քնորոշ կողմը՝ սինկուպներն են. Ներդաշնակության թեթևորեն խաղուն այս ընդհանուր փոնի վրա մայր եղանակները կարծես որպես յուրահատուկ «բառելլիք»-ներ նև նշուամ:

Հայկական ժողովրդական երգի մշակման բնագավառում կատարված Եկմալյանի ստեղծագործական որոնումների մեջ ներդաշնակության Կոմիտասյան այս կամ այն սկզբունքի թեկուց փոքրիկ, դժվար նկատելի, սակայն այնուամենայնիվ ըստ էության ոչ պատահականորեն տեղ գտած առկայումները հաստատող ավելի շոշագիր մի

օրինակ ևս կա: Մակար Եկմալյանը իր ձայնագրած ժողովրդական նրգիրից և պարեղանակներից մի քանիսը մշակել է գաշնամուրի համար, Այս երկուցից ինքնին արդին մի հետաքրթիր փաստ է, քանի որ դա հայկական գործիքային-կամերային երաժշտության մեջ ժողովրդական երգի օգտագործման առաջին փորձն է ներկայացնում իրենից: Մեզ թվում է, թե կոմպոզիտորը աշխատել է վերաբարդել ժողովրդական գործիքային անսամբլերին մեկի հնչողությունը. ասենք երկու դուրսով երկու նայ (որոնցից մեկը եղանակն է տանում, մյուաց՝ ձայնառություն է պահում) և դաֆի: Նույնպիսի ձտումով չ' շեկավարվել նաև Կոմիտաս վարդապետը ժողովրդական եղանակները դաշնամուրի համար մշակելիս Կոմիտաս վարդապետը միշտ պարերի վերնագրերի տակ ուղղակի դրում է. սփողի և թմբուկի ոճով, թառի և դափի ոճով:

Եկմալյանը ոչ միայն նախապաշարված չի ներկա ժողովրդական երգի հանդեպ, այլ ընդհակառակը, այն մշակելիս և ներդաշնակելիս աշխատել է ենթել նույն այլ ժողովրդական երգի ազգային առանձնահատկություններից: Մեր երաժշտության նախակոմիտասյան շրջանը ապրել է գեղջուկ երգի մշակման սկզբունքների նախնական բյուրեղացման մի շրջան, անցնելով երկու կտապից Կարա-Մուգա և Եկմալյան:

Եկմալյանի ձեռագիրում կարելի է հանդիպել նաև հայկական աշուղային, կամ աշուղական տիպի՝ քաղաքային երգերի մշակման (մեներգի համար, դաշնամուրի նվազագույթյամբ): Դրանցից «Պաղ աղբյուրի մուտին»⁷ երգը, որն իր չերմ, անմիջական հուզականությամբ և կատարելության հասած մշակմամբ մինչև այժմ էլ պահում է իր ամբողջ թարմությունն ու գեղարվեստական արժեքը, պետք է դիմուլ որպես հայկական ազգային ոռմանսի ստեղծման փորձերից մեկը:

Ավարտելով Հայկական երաժշտության պրոֆեսիոնալ առաջին մշակներից մեկի կյանքի և ստեղծագործական ուղղու ուսումնասիրության նվիրված մեր այս փորձը, պետք է ասենք, որ Եկմալյանի ստեղծագործական գործունեությունը ունեցել է նաև որոշ հակասություններ, թայց դրանք ոչ մի դիմքում չեն կարող նստեացնել ականավոր կոմպոզիտորի համար ծառայության նշանակությունը: Ինչպես գրում է երաժշտագիտ Ալ. Թաղեռոյան՝

7 Մ. Եկմալյանի մշակած «Պաղ աղբյուրի մոտին» երգի եղանակը սիմալմակը է, որ մաել է աշուղ Զիվանու երգերի ժողովածուի մեջ:

«Թիվունու եկմալյանի երաժշտական ստեղծագործական գործունեությունը զերծ չի եղել հակասություններից, այնուամենայի հայկական երաժշտագիտ արվեստի զարգացման գործին մասնացած նրա նշանակալից ժառայությունները մեզ իրավունք են տալիս սիրով և երախտագիտությամբ խոսել անվանի կոմպոզիտորի մասին»⁸: Արդարեւ, Հայաստանի երաժշտագիտներն ու երաժշտական գործինները ավելի ու ավելի մեծ սիրով և երախտագիտության զգացունում եկմալյանի երաժշտական գործունեության և ստեղծագործական ժառանգության գնահատման խնդրի վրա: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտում լուրջ աշխատանքներ են առավում Եկմալյանի ձեռագրերի կարգավորման ուղղությամբ: Վերջերս Հայաստանի Գետական երգչախումբը կատարեց Եկմալյանի Պատարագից մասեր, Երևանի ուղղությունում է նաև նրա դաշնամուրային «Նոկտուրն»-ը, «Չեմ կը ընա խաղա» և «Պատի աղա» պիեսները, «Էլոեց» Ամպերը եկան...» (խոսք՝ Ռ. Պատկանյանի), «Ոչ փող դարկինք» (խոսք՝ Մ. Պաշիկթաշյանի) երերը և այլն: Հույս ունենք, որ մի գեղեցիկ օր էլ կհրատարակվեն Եկմալյանի կարգավորված ձեռագրերը, ուսումնասիրությամբ հանդերձ:

Մեր այս ուսումնասիրության վերջում նպատակահարմար ենք համարում Եկմալյանի ձայնագրած, մշակած և ներդաշնակած երգերի, ինչպես նաև առաջարարակ նրա երերի այլբինական ցանկը ուղի, օգտվելով Հայկական նախասուվիտական պարբերական ժամունություն (այս դեպքում մի քանի երգերի ժիամ անուններն են հայոնի) և կոմպոզիտորի արխիվից (այստեղից վերցրել ենք նաև միայն ձայնագրված երգեր կամ մշակված սևագրություններ):

- 1) «Աղնիվ ընկեր»
- 2) «Ահա ծագեց կարմիր արև»
- 3) «Այսօր վերստին նորոգեալ»
- 4) «Անձրւն եկավ շաղակեն»
- 5) «Անուշ ձայն ունես քնար»
- 6) «Աշխարհ ամենայն» (Շնորհալի), (տե՛ս «Գեղարվեստ», 1911 թ., № 4, էջ 235)
- 7) «Ապրե դու ներսես»
- 8) «Առավույան քաղցր և անուշ հովելո»
- 9) «Բաղեր տվեք կանաչեցեք»
- 10) «Բերդից գուրս ելա»

8 Ալ. Թաղեռոյան, «Մակար Եկմալյան», տե՛ս «Առաջական Հայաստան», 1956 թ. փետրվար, № 29, էջ 3:

- 11) «Բլբովն Ավարալրի» (խոսք՝ Հ. Դ.
Ալիշանի), (տե՛ս «Թատրոն», թիֆ-
լիս, 1899 թ., № 2, էջ 28)
- 12) «Բոլըդ բարձր»
- 13) «Գացի արտեր բռնի լոր»
- 14) «Երր որ բացվին»
- 15) «Երդ առանց խոսքի» (դաշնամուր)
- 16) «Երգեցողութիմք Ս. Պատարագի»,
Լայպցիգ, 1896 թ.
- 17) «Զոմա Զոմա» («Զինչ ու զինչ տամ»)
- 18) «Լորիկ»
- 19) «Լուսնյակ գիշեր հուն անուշ»
- 20) «Լուց: Ամպերը եկան...» (խոսք՝ Ռ.
Պատկանյանի)
- 21) «Կապույտ նրկնքում»
- 22) «Կեցե Զելթուն»
- 23) «Կոլոտ էր խորոտ էր»
- 24) «Համեստ աղջիկ»
- 25) «Հերիք որդյակք»
- 26) «Հոգիդ Աստուած, աղբիւր շնորհաց»
- 27) «Հուլ արեք սարեր շան»
- 28) «Հրաշափու Աստուած»
- 29) «Զայնը հնչեց երգումեն»
- 30) «Մայիսյան վարդ»
- 31) «Մեր ազգ հալածված»
- 32) «Նոկայուրն» (տպ. 1892, թիֆլիս)
- 33) «Նստեր հս»
- 34) «Շարական Վարդանանց» (տե՛ս Գե-
ղարվեստ, 1909 թ., № 3, էջ 176)
- 35) «Շորորա սալաթ»
- 36) «Ոլոր մոլոր Կորն էր գալիս»

- 37) «Ողջույն տվեք»
- 38) «Ու փող զարկինք» (խոսք՝ Մ. Պիշիկ-
թաշլանի)
- 39) «Ով դու բարեկամ» (խոսք՝ Հ. Դ.
Ալիշանի)
- 40) «Ով երանելիդ ամենեցո՞ւ»
- 41) «Ով հայոց Աստված»
- 42) «Չեմ կրնա խաղա» (դաշնամուր)
- 43) «Պաղ աղբյուրի մոտին»
- 44) «Պատի տղա» (դաշնամուր)
- 45) «Ջան գյուղում»
- 46) «Բոմանս» (Զայնեի խոսքերի վրա)
- 47) «Սիոնի որդիք»
- 48) «Սիրուհիս քեզ համար» (խոսք՝ Ժո-
ղովրդական)
- 49) «Վարդը» (օպերա-կանտատա)
- 50) «Վարդ կոշիկ»
- 51) «Տէր, կեցո՛ Դու դհայս»
- 52) «Քաջեր, դուք կանչեցեք»
- 53) «Քեզի մեռնեմ էջմիածին»
- 54) «Քելե քելե խորոտ աղջիկ»
- 55) «Օրորցային երգ»⁸

8 Այս ցանկը, որը պարունակում է Մ. Եկմայլանի
հորինած կամ ձայնագրած և մշակած հայկական հո-
գեոր, ազգային-հայրենական հոգեական, ժողովրդական,
քաղաքային և աշուղական մեղ հայտնի երգերը,
ընականագր կարող է լինել թերի և պահանջանոր
Այնուամենայնիվ, ուս մի որոշ գաղափար կտա ըն-
թերցողներին՝ Եկմայլանի ստեղծագործական ժառան-
գության մասին:

